

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐԻ"

ՆԱԽԱ ԿԱՐ ԴԱՐՁՄԱՆ ԲԱՐՈՒՆԻՐՈՒՄ
ՊԵՏԻ ԵՒ ՈՐՎԵՐՆԵՐ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Երկրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire
Ձևագրութիւնն եւ չին գործարար,
ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԵՆԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ս Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՐՇՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՈՒՄՈՐՈՒԹՅԱՆ

ՇԱԲԱԹ 17/30 ՄԱՐՏ 1901

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 78

ԲԱՃԱՆՈՐԳՈՒԹՅԱՆ

Գրքերի համար	Տարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	Տարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՆՈՒՄՆԵՐ ԶԱՄԻՐ		
Տարեկան	Ֆրանկ	18
վեցամսեայ	»	11

ԲՈՒՄՈՑ ԵՒ ԿՈՎԱՍԵՐ ԶԱՄԻՐ		
Տարեկան	րուբլի	7
վեցամսեայ	»	4

ԲԱՃԱՆՈՐԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄ ԵՒ
ԵՒ ԲԱՐՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԹԵՐԻՒՆ ՎՈՐՆՈՒՄԻՆ ՎՐԱՅ Լ.

ՀԱՐԱՆԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Անգլիոյ մէջ հանրային կարծիքը շերտ մտահոգութեամբ կը հետեւի Պոթա և Գիշնէր գործարարներու միջև վերջերս բացուած բանակցութեանց: Թէև քանից այս մասին հարցումներ ուղղուած են Պ. Պալֆուրի, սակայն այս վերջնոյն գաղտնապահութիւնը աւելի ստուկացուցած է ժողովրդեան հետաքրքրութիւնը:

Այս հետաքրքրութիւնը աւելի սուր կերպարանք մը առաւ երբ անցեալներն իմացուցաւ թէ Լորտ Սոլդայերի անակնկալ կերպով նախարարական ժողով մը գումարած է այնպիսի փութկոտութեամբ մը, որ երկու նախարարներ՝ Լորտ Գոսոկոնսը և Լորտ Սէլպորնը՝ ծովային նախարարը, ժամանակ չեն ունեցած ներկայ գտնուելու այդ ժողովին:

Այս պահուստ Անգլիոյ ժողովուրդը և խորհրդարանը կը նմանին վիթխոր Հիւկոյի այն մարդուն՝ որ անձկութեամբ պատի մը կը նայի որուն ետևը գիտէ և կամ կը կարծէ թէ՛ բաներ մը կը գտնան կոր:

Եւ իրաւ ալ բաներ մը կը գտնան կոր: Թրանսպարանտ արեւելեան և հիւսիսային-արեւելեան կողմերուն մէջ Ֆրէնչ գործարարին կատարած մեծ գործողութիւնները՝ քիչ մը սարսուցիկ Պոթերները որոնք ի վաղուց անտի ճանչցած են այդ զինուորականին տաղանդը և արժանիքը:

Լուի Պոթա, որ հանրապետութեան զինուորական ոյժերը կը կառավարէ Թրանսպարանտ այդ կողմերը և Շաք-Պուրկէր՝ որ ի բացակայութեան ֆրուկէրի, փոխ-նախագահի պաշտօնը կը վարէ, այս երկու գեներալները անոնցմէ չեն, որ իրենց անձնական շահերուն և կամ անձնական պաշտպանութեան համար ազգային դատը կը զոհեն, հետևաբար ասոնց կատարած բանակցութիւններու մէջ բռնած ընթացքէն պէտք է ընդունիլ թէ՛ իրենք մղուած են ազգասիրական ոգիէ մը և երբեք խտրութիւն չպիտի գնեն իրենց բանակները և հայրենիքը պաշտպանելու գործին մէջ:

Կամ ուրիշ կերպ խօսելով, խնդիրը

զինադադար մը կնքելու և կամ անձնատուր ըլլալու մէջ չի գոյանար միևնաչ. իրենց մտածածը ընդհանուր Թրանսպարանտ կացութիւնն է որ կենսական կարևորութիւն մը ունի իրենց աչքին:

Եթէ երբեք իրաւ է թէ Անգլիացիք այլևս իրենց ձեռքը անցած գերիները Սէլթ-Հէյլէն և Սէյլան չեն զրկեր, ասիկայ լաւ նշան մըն է և կ'ապացուցանէ թէ պատերազմին վերջը հետո չէ: Ամեն պարագայի մէջ զգուշանալու է կանխակալ գաղտնիքներ կազմել առաջուց այն բանակցութիւններուն վրայ զորս այս պահուստ Անգլիական սպայակոյտը կը կատարէ Պոթերական ընդդիմութեան հերոս-պատերազմին հետ:

Գեռ մէջտեղը բան մը չկայ սրով կարելի ըլլալ մեզի կարծել թէ Անգլիացիներն են որ պատերազմէն դատ մը առած, յարգել պիտի ուզեն ազգի ուղով ազգի մը անկախութիւնը և կամ Պոթերներն են որ յուսահատութիւն վերջ ի վերջոյ գլուխներն պիտի ձեն իրենց անկախութիւնը և ազատութիւնը խոզ բռնն ոյժին տուլ:

Ինչ որ կրնանք բռնել սա է թէ: Գեներալներ այնպէս մը բերին որ երկու կողմէն ալ քայլեր կ'առնուին յարմար առթիւ հաշտութեան մը յանգելու համար:

Անգլիոյ մէջ, հակառակ կայսերական-ազգամուտիւն բարբառումին, կան շատ մը ողջախոհ մարդիկ ալ որ հիմնական կը կուսեն եթէ ոչ պատասխանատուութեան մը ծանրութիւնը՝ եթէ երբեք Անգլիա փճացնէ երկու ազգային անհասականութիւններ, այլ այն զինուորական, սնտեռական, միջազգային, քաղաքական և բարոյական դժուարութիւնները որ այդպիսի ձեռնարկ մը մէջտեղ պիտի հանէր:

Եթէ երբեք շատ կանուխ է հաշտութեան մը վրայ մտածել այս պահուստ, և եթէ երբեք բաշխարար և ուղղամիտ մարդիկ ինչպէս Պ. Մոուլու և քանի մը ուրիշներ որ չեն դադարել աշխատել իրաց արդի վիճակը պահպանելու համար, միւս կողմէ սակայն հանրային կարծիքը իրաւախոհութեան մը պէտքը անհրաժեշտ կը գտնայ:

Այս հոսանքը մինչև ո՛ր պիտի առաջնորդէ մտքերը և վերջապէս կառավարութիւնը ինչ զիջումներ պիտի ընէ Պոթերներուն և մինչև ո՛ր պիտի հասնի հաշտասէր ոգին կառավարութեան մը որ Պ. Չամպլընէնի պէս մէկը ունի իբրև զրոյզ և Լորտ Գիշնէրի և Սըր Ալֆրէտ Միլնէրի պէս մարդիկ ունի իբրև գործիք. ահաւասիկ հարցումներ սրտնց զիբրին չէ պատասխանել:

Ի՛նչու կողմէ, հակառակ անզուսպ հայրենասիրութեան մը և յամառ դիւցազնութեան մը, Պոթեր պետերը քիչ շատ ջլատուած ըլլալու են ի տես այն անյաջողութեան՝ որ իրենց Գաբի վրայ բրած յարձակումը պատճառեց և ասոնք վործով տեսան թէ Աֆրիքանտէրներու աշակցութեան վրայ երբեք յայտ գնելու չեն, որբան ասին որ իրենց դատը զէնքով պաշտպանելու հարկին մէջ գտնուին: Աֆրիքանտէրները խաղաղասէր ոգով մը սրտն իրենց համակրութիւնը և պոթերներու սպասածը ասանկ պըղատողական օգնութիւն մը չէր:

Անշուշտ Տը վէթ անգամ մը ևս պըծաւ թշնամիին ձեռքէն, և երբեք պատերազմի մը պատմութեան մէջ չի կայ աւելի գեղեցիկ էջ մը քան Փետրուար 28ի օրը՝ ուր Անգլիական սպայակոյտին առաջնապետական մէկ սխալէն օգտուելով Տը վէթ զինքը չըլապատող Անգլիացի բանակին հինգ բազումներուն կողմէ կազմուած երկաթեայ չըլանակը խորտակելով, անցաւ մտաւ Օրանտ և իր փրկութիւնը այսպէսով ապահովցուց:

Հիմայ որ այդ անկախ պետութեան մէջ կը գտնուի և որուն ամեն ծակ ու ծուկը գիտէ իր տանը պէս, այս անբաղդատելի հերոսը գեռ կրնայ վախ ազգի Ալպիսնի զաւակներուն: Նա ամեն տեղ է, ասոնց որեւէ տեղ մը ըլլալու և անգամ մը ևս հաստատեց թէ իր վերջի անյաջողութեանէն երբեք չէ վհատած և թէ պէտք չունի Աֆրիքանտէրներու աշակցութեան:

Ուստի գեռ շատ անուկնակներ կարելի է սպասել այդ մարդէն, և թեքա Սըր Ալֆրէտ Միլնէր խիստ կը շատայէ Օրանտի մէջ, զինուորական ոյժին տեղ քաղաքային կառա-

վարութիւն մը հաստատելու գործին մէջ:

Սթէյն և Տը վէթ գեռ կը գործեն կոր և գեռ շատ փորձանքներ կրնան բերել Անգլիացիներու զլխուն:

Թրանսպարանտ մէջ խնդիրը տարբեր է: Պոթերներու համար կ'ըսուի թէ իրենց թնգանութեանը հողին մէջ թաղած են, մինչդեռ միւս կողմէ Պոթա իր դժբաղդ երկրին համար հաշտութեան պայմաններուն վրայ կը բանակցի. բայց այս ամենը պէտք չէ երևակայել տալ Անգլիոյ թէ՛ յոգնած վհատած և ամեն բանի վիջանոյ մարդերու հետ այլևս գործ ունի:

Ո՛վ գիտէ, թեքա անպարտն պատանք մը իրեն կ'ապասէ:

(Լ. ԲԱՆ)

ՄԱՐԿՈՒՄ ԵՍՅԸ

Մարդն, հազիւ աշխարհ եկած... Դըրախտէն, զարդարած երախայ, Անգլետ թէ՛ ուստի, ո՛րք գայ — և արդէն կուլա՛յ ու կուլա՛յ:

Խոնձարուրներու մէջ շինջ, ու փախուկ բարձերու վըրայ, Երբ ծըծէ իր մօր կաթն անուշ, տաքուկ, կուլա՛յ ու կուլա՛յ:

Երկամեայ մանկիկ, գողտրիկ, գայթիկ գայթիկ, Երբ ոտքի կ'ելլայ, — ո՛չ հոգեք ունի, ո՛չ ալ... խցիկ խա՛յթ — կուլա՛յ ու կուլա՛յ:

Մանուկ մ'է կայտառ, թռնոյ դայլայլիկ ու խա՛ղոն ունի նա... Բայց չեն տար իրեն, պըտուղ, խաղալիկ, կուլա՛յ ու կուլա՛յ:

Արթուն պատանի, ուսման ու մրցման Տե՛ղը կ'ուռննայ, Նիշի՛ մը համար, մերթ, տըղո՛ւ նըման, կուլա՛յ ու կուլա՛յ:

Երբոր կը հասնի իր արքուն հասակ, Գայթարը ճանչնայ... Կը կըրէ զրկանք, ցա՛ւ բազմատեսակ, կուլա՛յ ու կուլա՛յ:

Սիրաը ծիւ կուտայ Սիրոյ սուրբ ծողկիւն, Ու կ'տմուսնանայ... Զինքը կը պատրեմ Մէր, Տարփանք և նիւն... կուլա՛յ ու կուլա՛յ:

Զաւա՛կ մ'ուռնի — կ'ը իր հոգեւոյն խաղալիկ — զո՛ր պաշտէ... — Ահա՛ յա՛ջ զայն իրմէ Մտնուած գերանդին... կուլա՛յ ու կուլա՛յ:

«Ա՛ն, սի՛ն են բոլոր վայելք աշխարհի, «Կեղծի՛ք անխընայ, «Երկի՛նք անգամ չեն արգար ու բարի...» կուլա՛յ ու կուլա՛յ:

ճաւոց շղթայ մ'է երկար, Կեանքն Գամակ, որ կը ծանրանայ...

Եւ Մարգի, ա'լ անգոր ծեր կորարամակ, Կուլա'յ ու կուլա'յ:

Եւ երրորդ կ'զգայ թէ՛ ժամն ձմեռայտեամ, Մա'նը մերձեցնայ, Թէ պիտ' հողիմ տակ թաղուի' յախտեան, Կուլա'յ ու կուլա'յ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջինս ԿԱՅՍՐԱՐ Գերմանիոյ երկտասարգ վեհապետին շուրջը հսկողութիւնը կրկնապատկուած է Նորին վեհապետութեան Լոնտոնէ վերադարձէն ի վեր:

Քոչտամի և Պէրլինի կայսերական պալատներու շուրջը գտնուող պահակ զինուորներու թիւը տասնապատկուած է և զիտուած է որ կայսրը և կայսրուհին Միզլիայէն վերադարձումէն ի վեր, ամեն անգամ որ կառքով լինելէր ահն Լէնաէն կ'երթան, կայսերական կառքը սովորականէն աւելի շուտ կը վազէ: Ասովն անդին ցըրուած անհամար ոստիկաններ կը հսկին կայսերական ամրակն ապահովութեան:

Մարտի 26 թուականով կը հեռագրեն թէ Միտհաթ փաշայի թոռը իտալի վեհապետ պէյ, որ Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ կը ծանուցանուի:

Պարսկէն Մարտ 26 թուականով կը հեռագրեն թէ Միտհաթ փաշայի թոռը իտալի վեհապետ պէյ, որ Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ կը ծանուցանուի:

Միտհաթ փաշայի մէջ տեղի սենեցած նախարարական վերջին նիստին մէջ որոշուած է ընտրել լուծել Պաշկար-Միտհաթի ստանիստի քովի թէնքերը ու ընդ զայն վարչական վայրկեան մը անջարման մասհարգութիւն պատճառեց Եւրոպական դոկտրիններուն:

Պարսկէն Մարտ 26 թուականով կը հեռագրեն թէ Պրէզիդենթ Պրոքսմարը յայտարարեց իր 4300 զինուորով, վե՛նից թէրաստորի մտ. գերի բռնուած են 140 Պոլսեցիներ, որոնք կործնուցած են 77 բեռնակառքեր, երկու թնդանոթ, վեց մարքիմ և ահապին բանա. կուլմամբ ուղղմամբերը:

Երէկի «Ռիբաբիտ»ի մէջ կը կարգանք: «Պոֆիայէ ստացուած հեռագրերուն համաձայն, Քիւրտներու կողմէ հարկւարուող հայեր ջարդուած են այս օրերս և Մէնաք (՝) քաղաքը ամբողջովին բռնուած են:»

Մեր պաշտօնակցին այս սուգըրը չենք զիտեր որ աստիճան ստոյգ են, մանաւանդ որ այս լուրը ուրիշ քաղաք ըլլալն ալ չի յայտնուիր: Արտաքին Գործոց Նախարարութեան հանձնարարութեան ղրուելը կը գտնուի Էտուարդ Է. թագաւորը որ 1,000 սակի ստորագրած է:

Արտաքին Գործոց Նախարարութեան ժամանորդի մը համար հաղար ուղկին զիտութիւն մը չի համարուիր սպառնալուցէս: Մարտ 26 թուականով կը հեռագրեն թէ Վաթիկի մէջ (Սամա) ժողովուրդը կուսակցական վեճերով զբաղուած է, վեճեր որ աւելի սաստկացած են Պամենեան մարտանաւի մը հան հասնելէն ի վեր:

Պարսկէն Մարտ 26 թուականով կը հեռագրեն թէ Միտհաթ փաշայի թոռը իտալի վեհապետ պէյ, որ Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ կը ծանուցանուի:

Պարսկէն Մարտ 26 թուականով կը հեռագրեն թէ Միտհաթ փաշայի թոռը իտալի վեհապետ պէյ, որ Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ կը ծանուցանուի:

Պարսկէն Մարտ 26 թուականով կը հեռագրեն թէ Միտհաթ փաշայի թոռը իտալի վեհապետ պէյ, որ Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ կը ծանուցանուի:

ԲՄԱԾԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

(ՍՐԵՆՄԱՓՕՎՐԱՅԻ ԳՐՈՒԹԵՄՄ)

ՈՍԿԵՐԻՉԸ

Ոսկերիչը կը սիրէ ունենալ, ամեն բան առաջ Լուկուոսի՛ վարը, հագուստին՝ անոր, բազմաթիւն՝ մոռը, պալլը-կամար-թափին՝ յորը և քանիքին շորը:

Այլը կը սիրէ աշխարհի մեծը և կը հայհոյէ հորը: Կ'ուսնայ ընթերցում ամեն կարգ և կը կարծէ թէ օսկերչութիւն է արհեստներուն ամենն զօրը:

Կը հարգանայ երբ կը թափանցէ մըր-ցակցի մը գաղտնիքին խորը և երջանիկ է, երբ կրնայ երթալ Կեօք-Սոյի մարը, կերակի օրը:

Կուսնան ամեն կողմ Էփրատի հանրի մը քողը և խղճահարութիւն չ'ունենար փորել գրացիին հորը:

Գործածած բաներուն կէտ կոր է և սոյսահարոյն ունեցած նայուածքը խոռ:

Ծանօթ ըլլալով անոնց որիտալութիւնը, բէք տեսնեմ, օսկերչներուն ո'րը չի սիրել ուսել, եթէ ինչ բան մը չի գիտնայ, ստոր անոր . . . միտը:

Յ. ԱՎԻՍՐ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գեր. Տ. Յովսէփի եպիսկոպոս Այվազեան, այսօր, պայքարի շնորհաւորութեան առթիւ պատիւ ունեցաւ ներկայանալու Ն. Յ. Խաչիկին, Այվազի պալատին մէջ:

Թեթիկ վարչութեան կողմէ կազմակերպուած երեկոյցը տեղի ունեցաւ հինգշաբթի դիշեր «Վարիէթէ» թատրոնին մէջ: Մեծաւ մասամբ երաժշտիչ և Տեղացի տարբին պատկանող անձնաւորութիւններ փութացած էին իրենց ներկայութեամբ ընթացիկ այս բարենպաստիկ ձևանակը և այսպէսով աւելի դասն էր դիտել այն անտարբերութիւնը որով մեր ազգայինները կը վարուին այս ստեղծ պարագաներու մէջ և միանգամ ընդմիջող շնորհներ վեր հանել ազնուութիւնը ներկայ եղող փոքրաթիւ հայերուն:

Ինչպէս շորեքաթի օրուան թուով ծանուցած կ'ընք, ի ստորե կը հրատարակենք «Իրազեկ»ի մի կողմից որ մանրամասն տեղեկութիւններ կուսայ Շէյխ-Էթմանի ծանօթ խնդրոյն վրայ:

Շէյխ Էթմանի խնդիրը

1. Նոր վարձակալին գանդաղը եղած է զլիսաւորարար թէ, հին վարձակալը արմատներէն զէջ կերպով յօտած է որով երկար ժամանակի համար պարտաւորութիւնը արդիւրուած թիւի պակասի մասին անոր գանգաւոր շատ երկրորդական տեղ մը կը բռնէ:

2. վարչութեան ֆազարական ժողովը իր նախագահով խոստացած է նոր վարձակալին այս գանգաւոր ի նկատի առնել և ընտելութենէ մը յետոյ գոհացում առ իրեն եթէ տեղի կայ: Նոր վարձակալը հաւանած և յանձն առած է հին վարձակալէն պարտատուած ցանկը բազմաթիւ սպառնալից պարտականութեան հետ և

արդիւնքը ժողովին հաղորդել պէտք եղածը անօրինելու համար, բայց նա զրթած է իւր խոստումը և ամիսներ յետոյ քնիկ գատարանին առջև դատ բացած է Առաջնորդարանին դէմ պահանջելով իր 630 սակի ֆառուց հատուցում:

3. Առաջնորդարանը իր փառատարանին և նշանաւոր օրէնագէտ փառատարան Պ. Գարթման տը վիտառի կարծիքին համեմատ, անմիջապէս դատ բացած է ապատիւյէն հին և նոր վարձակալներուն դէմ, խառն նախանկան ֆատարանի ստիպողական գործոց գատարանին առջև, վառնդի հին վարձակալը օտարահարուակ է. թէև նոր վարձակալը պահանջած է որ ինք գատէն դուրս ձգուի, բայց գատարարը հակառակը վճարած է և պաշտօն յանձնած է Պ. Թոմիս Պուզըրի լինդիրը տեղւոյն վրայ բնակ և իրեն անդիկազրել:

4. Առաջնորդարանը յիշեալ փառատարաններու կարծիքին հետեւելով միշտ, ներկայացած չէ քնիկ գատարանի, հետեւաբար նոյն գատարանը ի բացակայութեան Առաջնորդարանի քննութիւն կատարել տուած և մատուցուած տեղեկազրին վրայ Առաջնորդարանը գատարարուած է պահանջուած գումարը վճարելու նոր վարձակալին, չնայելով որ այդ գումարը զրթիթե ետապատիւն է ամբողջ ապատիւն տարեկան վարձքին:

5. Երբ քնիկ գատարանի վճարգիրը Առաջնորդարանի հաղորդուած է, այս վերջնոյն կողմէ Թրքիստի ատարակայ եղած է միեւնոյն գատարանի մէջ, պահանջուելով որ ան այս դասին մէջ օտարահարուակ կենայու պարագան ի նկատի առնելով ինքզինքը անձնահաս հոշակէ, կամ մերթէ նոր վարձակալին անհիթթ պահանջումը կամ գէթ յետագէ իւր վճիռը մինչև որ խառն գատարանը իր վճիռը արձակէ միեւնոյն լինդրոյ վրայ: Գատարանը սակայն կը հատուակէ իր արգէն տուած վճիռը, որ Առաջնորդարանի կողմանէ քնիկ վերաբնիչ գատարանին կը մատուցուի բեկանումը պահանջուելով:

6. խառն գատարանի ստիպողական գործոց գատարանին կողմէ կարգեալ քնիչը՝ քանի մը օր առաջ կը մատուցանէ իւր տեղեկազրիքը որով կը տեսնուի թէ՛ արմատներէնուր զէջ յօդուած ըլլալու ամբատանութիւնը ի սպաս անհիթէ, հատուակուած ըլլալով որ Ազգային ապատիւյէն արմատներէնը նոյնքան արգատար եղած են որքան զբացի և մարդաբանիկ հոշակուն մէջ անկուած արմատներէնը:

7. քնիկ գատարանի վճարգիրը ճշգրտ չէ արմատներէնուր թիւէն որքան պակասած ըլլալը, բայց Պ. Պուզըրի հատուակուած է թէ 4780 արմատներէն, որ նշանակուած է նոր վարձակալի պայմանագրին մէջ, պակասած է միայն 285 հատ, որու 235 հատին արժէքը Առաջնորդարանը իրաւունք ունի գանձելու նախորդ վարձակալէն ու ֆոնցեալ 30 հատին պատասխանատուութիւնը կարելի եղած չէ հատուակել իրեն թէ որը կը պատկանի նոր վարձակալին թէ հինին: 8. Մեծ յոյս կայ որ բնիկ վերա-

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

քննիչ գաւառաւոր զոհացում առջ Ա-
աջնորդարանի պահանջումին, մա-
նաւանդ երբ աչքի առջն ունենայ Գ.
Պուլլարի տեղեկագիրը և սա պա-
րագան թէ՛ նոր վարձակալը քննա-
թեան առջն անոր ներկայացած
և ինքզինքը արդարացիելու համար
բոլոր ճիշդ թափած է: Նոր վար-
ձակալը շատ շատ, այն ալ իթէ Ա-
աջնորդարանը չունի առաքելութիւն
մը ընելու, իրաւունք ունի պահած
233 արմաւենի ծառերուն իւրաքան-
չիւրին համար 13, այն է ամենուն
համար 3,055 զր. պահանջելու, հաշ-
ուեկցելու պայմանաւ 51 արմաւենի
արժէքն, իթէ անոնց մասին իր պա-
տասխանատուութիւնը հաստատուի:
Ետտանալով վերադառնալ այս
խնդրոյն վրայ, կը յայտնենք թէ Բը-
նիկ գաւառաւոր քննիչներու վարձքը
միայն 20 ոսկի է և ոչ թէ 200, և ու
որ այս խնդրոյն վրայ ճշմարտու-
թիւնը կուզէ գիտնալ, կրնայ մեզի
պէս քիչ մը աշխատութիւն յանձն
առնել և քննիչ ու խառն գաւառաւոր
ներու պատկանելի սենեակները ներ-
կայանալով բուն իսկ գաւառական թըզ-
թածարներէն ուղղակի քաղել ինչ
տեղեկութիւն որ կուզէ. թէ և չեմ
կարծեր թէ Աաջնորդարանն ալ
բարեմիտ ոգով, այս խնդրոյն վրայ
տեղեկութիւն առնել ուղղութեամբ
Իր Գիւնատան դռները փակէ:

Գահիրէ 27 Մարտ 1901

ԻՐԱԶԿ

Յաւ ի սիրտ կ'իմանանք թէ ՏԻԱՐ
ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ, յետ առ-
ժանելի հիւանդութեան իր մահկա-
նացուն կնքեր է երէկ առաւօտ ժա-
մը 9ին:

Հանգուցելոյն յուղարկութիւնը
կատարուեցաւ երէկ ժամը 3ին (յ. մ.)
բարեկամներու խումն բաղմունքեան
մը ներկայութեան:

Խմբագրութիւնս իր յաւակցութիւն-
ները կը ներկայացնէ Այրի Տիկին
Մկրտիչեանի և գաւակացը:

ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

(Շար. նախորդ թիւէն)

Երբ պատահի այնպիսի դատ մը զոր
Գատաստանական Խորհուրդը իր ձեռնհա-
ստութենէն վեր դատէ, ըստ պահանջման
խնդրոյն կամ կրօնական կամ Բաղաբական
և կամ խառն ժողովոյն յանձնուելուն հար-
կաւորութիւնը կը ցոյցնէ:

Եթէ Գատաստանական Խորհուրդ մը
որոշուած դատի մը դէմ բողոքը գատաս-
տարուելու, ինչպէս վերասին կը քննուի յիշ-
եալ ժողովներէն մէկուն մէջ՝ որուն որ կը
վերաբերի:

4. ՎԱՆՕՐԵԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 48, վանքերն Ազգին սեպհական
ստացումքն ըլլալով, Ազգին կը վերաբերի
անոնց մատակարարութեան հաստից ու
ձախուց բնականուր տեսչութեան և քննու-
թեան իրաւունքը:

Այսօր Գործարան-Պայքամի սովոր
ն. Բ. Խախիբ, առտուն կանուխ ներ-
կայ գտնուեցաւ զօրահանգէսի մը որ
տեղի ունեցաւ Ապրիլայից, և յետոյ
Ապրիլի պարտաւր վերադառնալով
Պայքամի մեծ ընդունելութիւնը կա-
տարեց մինչև կէս օր:

Պայքամի տօնին պատճառաւ կա-
ռավարական Պաշտօնատունները դոյց
պիտի մնան այս օրու ընէ սկսեալ մին-
չև հինգշաբթի:

Շէյխ Շէքիպ պէ. Էլ-Ռիֆայի,
որ քաղաքական յանցանքի մը համար
Եղիպտոս ապաստանած էր, Սոյթիա-
նին սիրական Ապու Հուսայի միջոցաւ
արտօնութիւն ստացաւ կրկին Պոյիս
մտնալու:

Թանթայի պոստիկ ամուսնացողը
այս տարի Մայիս 4ին պիտի սկսի:

Շէքիբու Օթէյի արկղակալը Գ.
Բ. . . քանի մը օրէ ի վեր անհետա-
ցած է զբաղանչերուն մէջ մտնալով
1,500 սակոյց գումար մը որ Օթէյին
կը պատկանէր:

Ոստիկանութիւնը Բոս-Սայիս և Ա-
ղեքանդիս հեռագրած է մասնա-
ւոր հսկողութիւն մը ընելու համար
մեզնոց շոգեհաններուն վրայ որով-
հետեւ կը կարծուի թէ Գ. Բ. . . ա-
ռիթէն օգտուելով օգտախոսութեան
երթալու մտադրած ըլլայ:

Այս անհատատարիմ արկղակալը
մտերմօրէն կատարած ըլլալով նախ-
կին ար Շիմէ Խյանուհայն և անոր
ամուսին Գ. Ռիֆայի հետ, Գահիրէի սո-
ստիկանութիւնը Աւստրիական Հիւպու-
ստարանի միջոցաւ քննութեան մը
ենթարկեց Բալարա Վարաի կողմ-
կիցը:

Այս տարի Մէքքէ հասնող իւ-
լամ ուխտաւորներու թիւը 17,383ի
կը բարձրանայ որոնց 6127ը Եգիպ-
տացի են: Գահիրէէն միւսայն 898
ուխտաւոր գտնուած են:

Ըստ որում հարկաւոր է որ ամեն վանք
իրեն համար յատուկ կանոններ անենայ,
կեդրոնական վարչութեան կրօնական և քա-
ղաքական ժողովները խառն ժողով կազմե-
լով, իւրաքանչիւր վանքի Բիթրանութեան,
նաև վանքից խորհուրդին կարծիքն առ-
նելէ հտը, պէտք եղած կանոնադրու-
թիւնը կը պատրաստեն, և Ազգային Ընդ-
հանուր ժողովոյ հաստատել կուտան:

Սոյն կանոնադրութեանց հիմնական ըս-
կզբունքն են:

Ա. Խրաքանչիւր վանքի մասնաւոր մա-
տակարարութիւնը իր Միթրանութեան կը
վերաբերի: Իսկ ամենուն վրայ ընդհանուր
տեսչութիւն ընելու իրաւունքը կեդրոնական
վարչութեան կը վերաբերի, որ կը գոր-
ծադրէ վանքից խորհրդին ձեռքը:

Բ. Խրաքանչիւր վանքի վանահայրը իր
Միթրանութեան կողմէն կ'ընտրուի, և կեդ-
րոնական վարչութեան խառն ժողովոյ հա-
ւանութեամբ Պատրիարքի ձեռքը կը հաս-
տատուի:

Վանահայր ըլլալու անձը պէտք է որ
երեսունհինգ տարին լրացուցած, և Օսման-

Անգլիական կառավարութիւնը
ուզելով աշխարհիս ամբողջ մարդա-
համարը ունենալ, Լօրտ Գրօմըր և
Եղիպտոսի ամբողջ անգլիական հիւ-
պատանները հրաման ստացած են Ե-
ղիպտոսի բոլոր բնակիչներուն մար-
դահամարը ընել և զրկել Լօնտոն:

Գ. և Կ. Մեյիքոնեան եղբայրը
Ֆայսա մէջ ունեցած ծխախոտի տէ-
վան գօղեր մտած ըլլալով 43 սակոյց
արժողութեամբ ապրանք վերցուցած
են:

Աղեքանդիոյ ճխախոտի մար-
տատան քննիչներէն Գ. Արթիւր Ու-
իլեէմը Գահիրէի մարտատան անօրէն
կարգուած է:

Սակէց տարի ու կէս առաջ կը
յիշուի թէ պաղտութիւն մը յառաջ
եկած էր Սոյթիանին և Խախիբի յա-
րաբարութեանց միջև: Հետեւաբար
անտեղի չէր կարծել թէ Շէքի. ք պէ. յի
Պոյիս ըրած ճամբորդութիւնը արեւ
նպատակ չունէր բայց եթէ կարելի
եղածին չափ մեղմացնել իրաց այս
վիճակը:

Պար Եղեքոսանի «սակայն բու-
ցարձակագէտ» կը հերքէ Շէքի. ք պէ. յի
այդ պիտի պաշտօն մը արուած ըլլալը
և զիտակցաբար կը յայտարարէ թէ
այդ ճամբորդութեան նպատակը և
արդիւնքը եղած է կարգադրել Բա-
վալայի մէջ ն. Բարձրութեան ունե-
ցած վաքըններուն խնդիրը, որ ըստ
մեր պատուական պաշտօնակցին, Խը-
տիական ընտանիքին պատկանի
միտնդամ ընդմիջու ճանչցուած է Բ.
Գրան կողմէ:

Ներքալարի օր Գահիրէի մէջ
տեղի ունեցաւ ֆրանսական նորաշէն
հիւանդանոցի բացումը ընդ նախա-
գահութեամբ Գ. Բօլօրաւանի:

Երեք հազարէ աւելի բաղմունքիւն
մը ներկայ գտնուեցաւ այդ հան-
դէսին:

Լօրտ Գրօմըր, Բրէնս Մուհամեմ
Ալի վաչան և Թալալով զօրավարը այս
օր Բոս-Սայիս կը մեկնին ուր գի-
մաւորել կերթան Անգլիոյ Գահատա-

անդ՝ Եօրքի գաւառը և դրուհին որ
հոն պիտի հանին կիրակէ առաւօտ
«Օֆրի» արքայական զբօսանաւով:

Լօրտ Գրօմըրի Եղիպտոսի վրայ
տարեկան տեղեկագիրը անգլիական
Խորհրդարանին պիտի ներկայացուի
Ապրիլ 15ին:

Խախիբի խառնութիւն մէջ վէր-
տի յիշատակին ի պատիւ և ի նպատու
Խախիբի Բարեգործական ընկերու-
թեանց տրուելիք ներկայացուցը Ապ-
րիլ 3ին տեղի պիտի ունենայ:

ԾԱԽՈՒ ՀՈՂ

Այն-էլ-Շէմի կայարանէն 42
վայրկեան հեռուորութեամբ Գաֆր
-կամուս անուն գիւղին առջև 10
ֆէստան հօղ ծախու հանուած է
Տիար Արմենակ Աստուածատուրանի
կողմանէ ամառական վճարմաներով:
Սոյն հօղը բաժնուած է 42 կտորի,
իւրաքանչիւրը 1,000 բառակուսի մէ-
թր տարածութեամբ և ամեն մէկ կը-
տորը պիտի ծախուի 2,000 զրուշի:
Յատակազմին և այլ տեղեկու-
թեանց համար զխմել առ Տիար
Արմենակ Աստուածատուրանի ի Գա-
հիրէ: 1-4

ԿԱԹՈՒԼԻԿ ԱՇԽԱՐՀԷՆ

ՎԱՏԻԿԱՆ ՅԱՅՏԱԳԵՍ ԿԸ ԽՕՍԻ.—
ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԿԱԹՈՒՐՆ ԻՐ.
ՄԷ ԴՈՒՐՍ ՀԱՒԱՍՏԱՑԵԼՈՑ ՀԱՄԱՐ.

Վիքորիա Թագուհին համար կաթոլիկ
եկեղեցիներուն մէջ հոգեհանգիստ չկատար-
ուելուն առթիւ, ինչպէս կը յիշուի, զանա-
զան վիճարանութիւններ տեղի ունեցան:
«Թայմ» մասնաորակու պարբերակը Լոն-
տոնի կաթոլիկ Արքեպիսկոպոս կարդնալ
Վճի արարքը, որ յատկապէս շրջաբա-
կան թուղթով մը արգիւծ էր իր թմին
մէջ հոգեհանգիստ կատարելն Անգլիոյ Թա-
գուհին ի յիշատակ: Արդ, ժիզուիչներու

5. ԵԼԵԻՄՏԻՑ ՀՈԳԱՐԱՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 49, Ելեմից Հոգաբարձութիւնը
կը բաղկանայ եօթն հաշուադատ անձինքէ.
զոր Բաղաբական ժողովը կ'ընտրէ բուկից
առաւելութեամբ:

Ելեմից Հոգաբարձութեան պաշտօնն է
Ազգային կեդրոնական Միտուկին անասու-
թիւնն ու համարակալութիւնը:

Այս Միտուկին մուտքն են՝ Ազգային
Ընդհանուր տուրք, կոստանդնուպոլսոյ Պատ-
րիարքական Դիւանատան հասոյթը, և ա-
սանց մասնաւոր տեղ մը որոշելու Ազգին
անուանը եղած կտակ կամ նուէր: Ելեմ են՝
Պատրիարքարանի և Դիւանատան սովորա-
կան ծախք, կեդրոնական վարչութեան ձեռ-
քը եղած Ազգային հաստատութեանց և կա-
րօտեալ թաղերու տրուելիք նպաստ, և զա-
նազան ուրիշ պատահական ծախք:

Ելեմից Հոգաբարձութիւնը բը հաւաքէ
ամեն այս հասոյթները, և իր ձեռքը կ'ըլլան
յիշեալ ծախքերը. միշտ Տիւնեսական Խոր-
հուրդին գիտութեամբ և Բաղաբական Ժո-
ղովոյ հաստատութեամբ:

(Շարունակելի)

Բնկերութեան պաշտօնական թերթը, որ կը հրատարակուի ի Հոռոմ, և վատիկանի կողմէ կը ներշնչուի, անցեալ օր հրատարակեց, պաշտօնական, հետեւեալ յոյժ շահեկան յօդուածը, որ ցոյց կուտայ անպատճառ ևս կաթոլիկ Եկեղեցիին կարծիքը՝ հոռոմականութենէ զուրս զանուոյ բրիտանացի հաւատացեալը հոգևոր փրկութեան մասին: Նոյն թերթը, որ կը կոչուի «Չիլիլա ֆագոլիքա», նախ կը յիշեցնէ «Թատայնի» և ուրիշ Անգլ. օրաթերթերու և հանդէսներու մէջ երեցած յօդուածները, որք կաթոլիկ Եկեղեցիին կը պախարակին իր աննորոգ ոգոյն համար, և կ'ըսեն թէ նոյն իսկ Արքեպիսկոպոսներ հրամայեցին արձաններ դնել ի հանդիսա հոգոյ Մեծ Սպիտակ թագուհոյն: Ամեն ցեղի և ամեն կրօնքի մարդիկ հաւատար անձնութեամբ կարգանք ընծայեցին Անգլիոյ թագուհոյն, կաթոլիկ Եկեղեցիին միայն, կարգինալ վճար միջոցաւ, աննորոգ թել մը գարկաւ: «Չիլիլա ֆագոլիքա» Անգլ. օրաթերթերուն այս տողերը մէջ բերելէ վերջ, կ'ըսէ.

«Ասոր կը պատասխանէ Հոռոմական Եկեղեցիին թէ իր փարսիկն զուրս մնացող ամեն ցեղի և կրօնքի մարդիկն են որ աննորոգ թել մը կը գարնեն: Ամեն շարեաց աղբիւրն է կրօնական ազատութիւնը որ գէշ կերպով մեկնուած է, որ ա՛յնքան հակասակ է բուն կրօնքին առաքինութեան, և զոր կը կոչեն խղճի աղատութիւն, բայց իրօք կրօնական ազատութեան է: Այս կրօնական ազատութիւնն է պատճառ այն անտեղի վարդապետութեան թէ բոլոր բրիտանական կրօնքներն յարգանքի արժանի են իրրե բոս օրինի հաւատար կրօնքներ, որպէս թէ ճշմարտութեան և մարտութեան իրաւունքները նոյն ըլլային կամ կարենային նոյն ըլլալ: Բանի մը կաթոլիկներու սխալ կարծիքը թէ Եկեղեցիին պարտաւոր է իր նախկին խտուածները մեղմացնել հանդէպ հերձաւորներու՝ այս թիւր և մարտ դրութեան միտադրել է: Բայց քա՛ւ լիցի որ մեր կաթոլիկները՝ համարձակներ սահման որոշել աստուածային գիշտութեան, որ անսահման է, կամ քա՛ւ լիցի որ համարձակներ չափել Աստուծոյ ծածկեալ խորհուրդները, որ անթափանցելի են մարդկային հասողութեան: Այսու հանդերձ, զիտենք և հաստատուել համազուած ենք թէ մեր սուրբ հաւատքին վարդապետութիւններէն մին ա՛յն է որ կաթոլիկ Առաքելական Հոռոմական եկեղեցին է միակ ճապարան փրկութեան, և թէ ո՛վ որ հան չի մտներ պիտի կորսուի ջրհեղեղին մէջ. հետեւաբար չենք կրնար չլստապարտել ա՛յնպիսի գրութիւնները, և չենք կրնար չ'ողբալ և չցաւել այն չափազանց ներքողալից լեզուին վրայ, զոր բանի մը կաթոլիկ օրաթերթեր բանեցուցին դամբանականներ գրելով անոնց վրայ, որք օտար և յաճախ թշնամի ըլլալով ճշմարիտ Եկեղեցոյն, յայտնապէս կը դաւանին կաթոլիկներն արդէր հաւատար մը: Բայց մենք չենք զարթիր պաշտել աստուածային միջոցներն և անխախտ հաճութեամբ հաւատարիմ մնալ պապական եկեղեցիին սա՛ կաթոլիկ վարդապետութեան թէ՛ որովհետեւ կա՛յ մէկ Աստուած, մէկ հաւատար, մէկ մկրտութիւն, այնպէս ալ մէկ ճամբայ և մէկ առաջնորդ կայ միայն դմարդիկ ի փրկութիւն առաջնորդելու, ճամբան Գրիստոս է, առաջնորդն Եկեղեցին է, անոր ձեռքով հաստատուած, միակ աւանդապաշտ մարդկային փրկութեան բոլոր բովանդակ միջոցներուն:»

(Երեսնամեայ յարգող թուով)

Ա. Զ. Գ.
Եղիպտոսի Արտասահմանի և կողմի վրայ արգոյ բաժանորդներէն անոնք որ մինչև ցարգ վճարած չեն իրենց բաժանորդագրիւնները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել:

Եղիպտոսի բաժանորդները կրնան Մանտա-Քոսթով ուղարկել իրենց բաժանորդագրիւնները. թերթիս վերջեր նշանակուած հասցէին:

ԿՈՒՋԷՔ ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հաս մը, ուր շատ մը զուարճայի և օգտակար հատուածներու հետ կը գտնուի նաև գեղեցիկ բազմապիւղ մը պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց գնել փոփառողք թո՛ղ հաճին գիմել առ Տ. Օհան Խնտամեան, որ պատրաստ է ուրիշ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնը փութով կատարել փոքրիկ կանխավճարով մը:

Երջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար գրածի տեղ լըրջ լծադրա՛յմ կընդունուի:

Տարեցոյցի գինը	10 Դր. ող
Պարզ օրացոյցիը	2 " "

Ա. Զ. Գ.

Շատերու կողմէ յայտնուած փոփոքի մը գոհացում տարու և մեր ընթերցողներու գիւրտութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Շալա Ապա-Էլ-Ապիզի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԱՅԱՆԻ խանութը ինչպէս նաև Գրք-Պէջ փողոցի ծայրը և թըրամիլէյն բու կայարանին մօտ ծխափաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՏՊԵԱՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

ՊԱՆԳ ԼԻՍՆԷՋ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Մինչև հանրածանօթ զրամատուներ, այս անգամ ունեցաւ իւր Եղիպտոսի գործադրիչ ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրատարակչին ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս փառահալութիւնը կը վայելէ:

Սոյն գործադրութիւնը, 11 Մեպտ. թիւ իրեն յանձնուած և Մինչև բազմապիտուութեան պաշտօնապէս փախարայուած փոխանորդարի համաձայն, պիտի կատարէ Պանգ Մինչև զի միջոցաւ ամեն տեսակ զրամական և ֆուէտի ֆոնդիէր, վիլ ալ բարի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, զանազան Մանական չնչին դամարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ առնեն, պահեստի բաժնեթուղթ մը, փիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փախարայները հաճին գիմել Նիւ-պառի վրայ փառաբան Ռարթի զրամանակը:

Թղթակցութիւն և կամ դրամ դըրկել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ ալ լա Պարսի կից, Բ. յարկ թիւ 9 գտնուի:

Կը բժշկէ բերնի և սկւայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Արքատները ճրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱՆԵԱՆ-ԹԻՄԱՆԵԱՆ ԸՆԿ.
ԱՄԵՐԻԿԱՆ ԳԵՐԱԿՆԵՐ
ԱՐԱՆՑ ԵՒ ՏՈՒՆԱՆՑ
ԵՒ ԶՆԻՍՈՒԹԵԱՆ ԿՊՐՈՑ

Ապսինի մեծ պոլոսային վրայ Տայիւայի Սանիթի դիւսպը, Բ. սիսիկն ելեկտրական գործիքն ու վաճառատներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիւնդ Պատ. յանձնարարները, գործի մարտութեան, գիւնրու շափաւորութեան և ճշգրտագործութեան կողմէն:

Մեր գործատուները մէջ կ'ուանգուին նաև ձեռագրութեան գրասեր ամերիկեան ամերիկեային կատարելագործուած մէթոսով,

Մանրամանութեանց համար գիմել մեր գործատուներն:

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՋԱՆՃԵԱՆ
Շարա Ապու-Սապահ
Նիխո-Տիխիբրեյ դեղատանին գիւնդը.

Օգտատն ու զուարճայի գիրք մատար ու փոխելու տարու համեզ ու անդարար կերակուրներու զանազանութիւնն, անխորդալս պոտրաստութիւն. ճոխ ճաշացոյցակ մը գիրք մատուցի գիւնրով ահա՛ Գաղանձեան եղարայ ճաշարանը:

Ով՛ որ կ'ողէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վտահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յանձնարողը պիտի գառնայ հոյակախ ճաշարանին:

Տպա. «Միտրիւն».— Թ. Ս. Փափսզեանի

Տ Պ Ա Ր Ա Ն

Ի ԳԱՀԻՐԷ

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԵԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետուներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակաղլուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Յանձնարարութիւններ կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և մաշակաւոր սպազմութեամբ:

ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆՆԵՐՈՎ